14. ԲԱԽՏԱՎՈՐ ՏՂԱ

Մեկ գեղեն իրեք հատ աղքատ տղա իրար հետ խորհուրդ կէնեն, օր էրթան ղարիբ-ղուրրաթ[1] աշխարհք դատում ու աշխատանք էնելու, օր ինչ է, բերեն իրանց քյուֆլաթը[2] պահեն։

Օրվա մեկը էդ տղեքը ոտ ու ձեռ ղայիմցրին, մեկ քիչ ճամբու պաշար դրին տավարճուղները, կապին շալակները, իրանց հորն ու մորը ձեռը պադեցին, օրհնենքներն առան ու աստված հիշելով ճամբա ընկան գնացին։

Գնացին, գնացին, շատ ու քիչն աստված գիտե, գնացին հասան թագավորի երկիրը։ Տունը քանդվի, երկիր մի՛ ըսե, մեկ աշխարհք ըսա, ոչ ծերը կա, ոչ գլուխը, էնքան օր մենծ էր։

Էդ խեղճերը, իրանք ղարիբ մարդիք, դուռ-երդիկ չիտեն, ոչ էլ մարդի կը ճանչնան։ Իրիկվա մութն օր ընկավ, մղրբբը գետինն առավ, ըտոնք դրռ հըլա մոլբրած հավի պես մնացել էին բազարի մեշ կայնած,՝ չիտեին թե ուր էրթան։ Չէ՛, չէ՛, մեկ քիչ երեսները պնդելով, ըստուց-ընտուց հարցնելով գնացին մեկ խանգ[3] տուն։ Գիշերը լավով-գեշով էդ տեղ անցուցին, մինչև օր բարի լուսը բացվավ (բացվի ամենիդ վրեն), ելան գնացին օր իրանց հրմար աշխատելու գործ գտնեն։

---

[1] Օտար (Ս. Բ.):
[2] Ընտանիք (Ս. Բ.):
[3] Քարվանսարա (Ս. Բ.):

Էսքով-էնքով ընկնելով, գլուխը քարին, քարը գլխուն տալով ամենն իրան հըմար մեկ գործ ճարեց ու սկսեցին բանել, աշխատել։ Մինչև իրիկուն կը բանեին, իրիկուն օր կէղներ, գուքային իրար գլխու թոփ կէղնեին, աստված իրան առատ ողորմությունեն ինչ օր տվել էր, ախպոր պես իրար հետ կուտեին ու փառք տալով կը պառկեին քնելու։

Էսպես անցավ մեկ օր, հինգ օր, թե ինչքան աստված գիտե, մեկ օր իրեքն էլ պարապ էին մնացել։ Միտք էրին օր էդ օրը էրթան իրանց հըմար քաղքի մեջը ման գալու, օր տեսնին թե աշխարհք ինչ կա չկա...։

Երբոր մեկ պատի տակ կայնած իրանց հըմար կը խոսեին, (սատանոք էդ օրն էլ թագավորը թապտիր ղըլլըղ—ծպտյալ ման դուքար) ընկերոջ մեկը խոսքի մեջ ըսավ,— էրնեկ թե, թագավորն աղջիկն ընձի տար, իրան փեսա էղնեի ու յավա՜շ, յավա՜շ մալ-գովլաթն ուտեի։

Մեկել ընկերն էլ ըսավ,— Ես թագավորի աղջիկը չեմ ուզե, թող ընձի մեկ կոտ օսկի տար, հերիք էր, ես ընձի կը կառավարցնեի։

Հըմը էն վերջի ընկերն էլ ըսավ թե,— Ես ոչ թագավորի աղջիկը գուզեմ, ոչ էլ ընտուր կոտըմ օսկին... ես իմ ղսմաթս էն թագավորաց-թագավորեն գուզեմ, օր ձեռի վրա ձեռ չկա։

Էս տղոց խոսած խոսքերը, ման գալու վախտը, թագավորը բոլորը լսել էր։ Տուն օր դարձան, վազիրին ըսավ թե,— Այսինչ տեղը, էն իրեք տղեքն օր իրար հետ կը խոսեին, թեզ գնա՛ կանչե։

Վազիրն էր, էն սհաթին թռավ գնաց, մեկ աչք խփել-բանալու չափ չանցած, տղոցը բերեց կայնեցուց թագավորի առաջը։

Թագավորը հարցուց թե,— Դուք պատի տակ կայնած վախտերդ ի՞նչ կը խոսեիք։

Առաջ վախեցան ու ինքյար էրին թե,— Մենք ղարիր մարդիք ենք, բան չէինք խոսա։

Երբոր թագավորը միամտցուց թե,— Միք վախենա, ընձեն ձեզի ոչ մեկ ղավալ չի հասնի, դուք արխեին եղեք,— էդ խոսքերեն տղոց մեկը սիրտ առավ ու ըսավ,— Թագավորն ապրած կենա, ես ըսի թե, թագավորն աղջիկն ընձի տար, իրան փեսա էղնեի ու յավա՜շ, յավաշ մալ-գովլաթն ուտեի։— Մեկել ընկերն էլ ըստուր հետևավ,—Ես էլ ըսի թե, թագավորի աղջիկը չեմ ուզե, թող ընձի մեկ կոտ օսկի տար, հերիք էր, ես իմ գլուխս կը պտտեի։

Վերջի ընկերն էլ ըսավ,— Ես էլ, տե՛ր թագավոր, ըսի թե, ո՛չ թագավորի աղջիկը գուզեմ, ո՛չ էլ ընտուր օսկին... թե, իմ ղըս-

մաթս էն թագավորաց թագավորեն գուղեմ, որ ձեռի վրա ձեռ չկա։

Էս ետի խոսքի վրա թագավորը տարավ բերեց, խոսողի բերնին էնպես մեկ խուտեի սիլա զարկեց, որ օխտն ակռեն մեկեն թափավ փորն ու ըսավ,— դե՛ թող հիմի քու թագավորաց թագավորդ քեզի ղսմաթ տա։

Ըտուց ետև աղչիկ ուզողին՝ աղչիկը տվեց, օսկի ուզողին՝ օսկին ու ճամբու դրեց։

Երբոր էդ էրկու ընկերն հազրվան իրանց երկիրն էրթալու, աղչիկ առնող տղեն ըսավ,— Ախր մենք իրար հետ բեռներով աղ ու հաց ենք կերել, մեր էն մեկել ընկերին, աստված ինչըղ ղաբուլ կենե, որ թողնենք ըստեղ խեղճ ու աղքատ, ու մենք ըսման փառքի հասած էրթանք մեր տները։ Գնա ընտուր էլ կանչե, բուռմ օսկի ես կուտամ, բուռմ էլ դու տուր, հետներս կառնենք կը տանինք։

Ընկերոջ խոսքը լսեց, գնաց մեկել ընկերին էլ գտավ, անուշ խոսքերով սիրտը շահեց, հետն առավ էկավ ու աստծու անունը հիշելով, ճամբա ընկան դրպա իրանց երկիրը։

Գինով մարդու քեֆն ինչպես որ կը թողնի ու խելքը գլուխը գալով ինքն իրան էրածից կը փոշմնի, էնպես էլ էս թագավորն էղավ։ Ինքն իրան կըսեր. «Ես էս ինչ էրի... աղչիկս տվի անտես-անճանանչ մեկ խեղճ ու աղքատ տղի, օսկիքս էլ մեկել ընկերոջը բաչխեցի... տե՛ր աստված դու փոշմնություն չտաս ընձի»։

Թագավոր էր, խո իրան խոսքը չէր՞ սըտի։ Մեկ անգամ խոսքը որ բերնեն դուս ելավ՝ ըսածը ըսած էր, կտրածը կտրած։

Հըմը ինչքան որ չէղնի ծնողաց գութ էր, աղչիկն որ ճամբու դրեց, դուրրին առավ ելավ բանձր այվանը ու դրպա աղչկան կաշեր, որ տեսնի թե որ կողմը կը տանին։ Տեսավ, որ ինքը իրեք հոգի է ճամբա գցել, հըմը հիմի ըտոնք չորս են։

Մեկ ձիավոր կանչեց ու թանբահ էրավ թե,— Կէրթաս էդ ճամբուց էրթրցողների ետևեն կը հասնիս, ամենից վերջի մարդը, ով որ էլ էղնի, գլուխը կտրես ու ետ գուքաս։

(Էդ ժամանակ թագավորի փեսացուն ձիու գյամը տվել էր էն խեղճ տղին թե,— Դուն ձին քաշելով առաջ գնացեք, մինչև որ ես գուքամ ձեր ետևեն կը հասնիմ,— ու ինքը ետ էր ընկել հարկավոր գործի հըմար)։

Ձիավորը աչքերը արուն կոխած, աբալթափալ էկավ ըտոնց մոտեցավ ու առանց խոսելու հետ ընկած մարդու գլուխը կտրեց ու զարձավ գնաց։

Էդ օրը իրիկունը գնացին հասան մեկ գեղ, աղքատի մեկի տու-

նը ղոնախ էղան։ Հըմը ձախորդությունը օր դա՝ մեկ անգամ իրար հետեւ գուքա։ Օսկիքը ստացող տղեն էլ, ճամբեն էր մրսել, թե ինչ է, էն էլ էդ գիշեր աղքատ պառավի տունը մեռավ։ Մնացին մենակ թագավորի աղջիկն ու շամար ուտող տղեն։

Առավոտն օր լուսացավ, ելան, աստված հիշեցին ու ճամբա ընկան։

Շատ ու քիչն աստված գիտե, իրիկունը գնացին հասան մեկ անվերի սարի գլուխ, որտեղ ճամբորդների հըմար մեկ խան կար շինած։

Տղեն ձիուց թռավ իջավ, ներս գնաց խանի տիրոջեն մեկ տեղ ուղեց, որ գիշերը մնան։

— Խանի տերն ըսավ.— Տեղ չունիմ, օտեքս բիրադի բռնըված են։

Տղեն շատ օր խնդրեց, աղաչեց, (ընտեղ մեկ վնասակար դարտակ օտա կար, օր գիշերը մեջը մնացողը, անհնար էր, օր սաղ դուս գար, անպատճառ կը մեռներ) խանի տերը ճարահատյալ էդ օտեն տվեց ըտոնց, օր գնացին մեջը տեղավորան։

Գիշերը շատ էր անցել թե քիչ, մեկ էլ հանկարծ տեսան օր, դուռը ինքն իրան բացվավ ու մեկ զարզանդով անծանոթ մարդ ներս մտնելով, մեկ բալնիք երկնցուց դրպա էդ տղին ու ըսավ.— Քու ամանաթդ շա՞տ պտի պահեմ, ա՛ռ, որ ես էլ մեկ քիչ դինջանամ։

Ու կորավ, անհայտացավ։

Էս անցքի վրա, էդ խեղճերը մեկ քիչ ժամանակ շփոթված մնացին, հըմը տղեն, էլի տղամարդ էր, շատ ու քիչ խելք ուներ։ Ելավ էսքով-էնքով ընկավ, տեսավ օր մեկ փակած դուռ կա։ Էդ ձեռի բալնիքով բացեց, տեսավ օր, ի՞նչ տեսնի, մեկ քովը ակնունանք, մեկել քովը օսկի, արծաթ, մալ-մալալ չորս կողմը թեռ տված են։ Էս օր տեսավ, էլ ձեն չհանեց, ուսուլով էկավ ու թագավորի աղջկան պատմեց թե՝ հալ-ահվալ ըսման բան կա, հիմի ի՞նչը էնենք։

Ինչքան օր չէղնի, թագավորի աղջիկը շեն տնից ելած էր, իրան գյորա խելք կունենար։

Տղին ըսավ.— Գնա՛ տիրոջեն հարցրու թե, էս խանը չի՞ ծախե, երբոր ծախելու էղավ, ինչ որ գուզե, տո՛ւր, ու ա՛ռ։

Տղեն գնաց խանի տիրոջ քովը, հարցուց իմացավ, օր կը ծախե։ Տիրոջ հետ բազար էրավ ու խանը ծախու առավ։

Էդտեղ ինչքան որ մարդ կար, առավոտը բիրադնին դուս էրավ, մնացին մենակ ինքն ու թագավորի աղջիկը։

Աղջիկը ըսավ թե.— Խանը քանդել տուր ու տեղը իմ հորս սա-

բայներու պես սարայներ չինել տուր, էնպես օր, իրարուց հեչ մեկ բանով չը չոկնվին։

Տղեն էդպես էլ էրավ։ Հըմը քովը մեկ խեյրաթլամա[1] էլ շինել տվեց էդ թագավորի անունով, որ գնացող էկող աղքատ ճամբորդները կառավարվին։ Էս բանի ձենը աշխարհք տարածվավ, չաղ էղավ, մինչև անգամ թագավորի անկաչն ընկավ։

Մեկ օր թագավորն իրան վազիրին ըսավ.— Էս ի՞նչ բան է, ես էդպես խեյրաթլամա շինած չունիմ, հըլա էսօր արի էրթանք տեսնինք ու գանք։

Թագավորն ու վազիրը աղքատի շորեր հագան, ելան ճամբա ընկան, գնացին հասան էդտեղ։ (Հըմը թագավորի աղչիկը հորն ու վազիրին պատրհանից տեսել ճանչցել էր)։

Աղչիկը տղին ըսավ.— Էս նոր էկող էրկու աղքատները իմ հերս ու իրան վագիրն են, գնա ղոնախ էրա բեր վերև, մի՛ թողնի էրթան խեյրաթլամեն, հըմա չէղնի թե ճանչվորություն տաս։

Տղեն էն սհաթին նարտիվաններեն աբալթափալ ցած իջավ, գնաց ընտոնց քովն ու քաղաքավարի ղոնախ էրավ վերև՝ իրանց տունը։ Ինքն առաջներն ընկած, ամեն մեկին տարավ իրան լայեղ տեղը։ Թագավորի աղչիկն էլ, յանի թե չէր ճանչնա, էկավ բարովեց ու գնաց իրան օտեն։

Անցավ մեկ քանի օր, թագավորն ու վազիրն ամեն բանի վրա զարմանք էին առել (էդ օրերը թագավորի աղչիկը շորերը փոխել, տղամարդի շոր էր հագել[2])։ Իրանց աչքերով կը տեսնեին, օր էս օտեքն էլ, ամեն բանն էլ իրանց ունեցածի պես են, էս հաց ու ջուր բերող, կերակրող մարդու աչքերն էլ մե քիչ նման են թագավորի աղչկա աչքերին... հըմը ի՞նչ կէնես օր էսիկ տղամարդ է, օղլուշաղ չէ։ Էս պատճառով իրանք էլ էին մնացել մոլըրած, ոչ իրարու բան կըսեին, ոչ էլ կիշխընային տան տիրոջեն բան հարցնել, օր ընտոնց հունքն ու բունքը իմանան։

Թագավորի աղչիկը տեսավ, օր հերը շատ միտք կէնե ու ռավուշը հեչ չի բացվի, ցավաց հոր վրա։ Մեկ օր էլ շորերը փոխեց, իրան առաջվա կնիկարմատի շորերն հագավ, հոր ու վազիրի համար հաց տարավ։

Հերը երբոր աղչկան տեսավ, ճանչցավ, էն սհաթին տեղից վեր թռավ ու փաթթվավ աղչկա վիզը, լաց էղավ, երեսը կը պագեր ու էլ չէր ուզե թե գրկեն բաց թողնի։ Վազիրը խո, սառած մարդու պես

[1] Աղքատանոց (Ս. Բ.)։

[2] Բացատրությունը պատմողինն է (Ս. Կ.)։

պնլացել մնացել էր ու բերնին գողի քար դիպած մարդու պես չէր խոսա։

Վերջապես, երբոր հաց կերան պրծան, վայ էն ուտելուն որ կերան, հացը իրանց կերավ, քան թե իրանք հացին... Թագավորը ամեն բան տեղրետեղ մեկ մեկ հարցուց իմացավ, ինչ որ իրանց տնեն ոտ դուս դրած օրեն անցել էր։

Թագավորը որ իրան խոսքը վերջացուց, տղեն առաջ էկավ ու ըսավ.— Թագավորն ապրած կենա, ամեն բան աղչկանեդ հարցուցիր, իմացար, ես քեզնեն մեկ խնդիրք ունիմ... Աղչիկդ քու տնեն ինչպես որ աղչիկ գլուխ դուս է էկել, էն օրեն մինչև էսօր, մենք իրար հետ քուր ու ախպոր պես ենք մնացել, նա իմ բերնիս սրբությունն է նղել։ Էստից ետև էլի իրավունքը քուկդ է, մեր դլխու տերը դու ես, ինչպես որ գուղես՝ էնպես հրամայե, մենք հնազանդ ենք ու քու հրամաններուդ հագր կայնած։

Հըլը տղեն խոսքը ղրա չէր վերջացրել, որ թագավորն ըսավ.— Ես կը տեսնիմ որ աստծու մատը էս բանի մեջն է, ինչ էլ որ ըսենք դարտակ բան է։ Երբոր թագավորաց թագավորը, որ ձեռի վրա ձեռ չկա, էսպես է արժան տեսել ու տնօրինել, ես էլ ի՞նչ կարող եմ ըսել։ Թո՛ղ աստված ձեզի օրհնե, գնացեք մուրազներիդ հասեք։

Ընտուց ետև քառասուն զոր, քառասուն գիշեր հարսնիք էրին, ձեղանով անուշ, կերան խմեցին։

Ընտոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին։